

Մոլեկուլային մոդելավորումը *in silico* մեթոդների ամբողջություն է մոլեկուլների կառուցվածքների փոխազդեցությունների և ֆիզիկաքիմիական հատկությունների մոդելավորման համար, որոնք կախված են կամ ազդում են այդ փոխազդեցությունների վրա: Այս առարկան դիտարկում է կենսաբանական մոլեկուլների մոլեկուլային դինամիկայի մոդելավորման առարկան, խնդիրները և գործնական կիրառումները: Առարկան հիմնված է մոլեկուլային մոդելավորման գործնական և տեսական ասպեկտների վրա, ինչը հնարավորություն է տալիս ուսանողներին օգտագործել ձեռք բերված հմտությունները սեփական փորձերում: Դասընթացը նախատեսված է չորրորդ կուրսի ուսանողների մոտ ձևավորելու տեսական և գործնական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են նրանց հետագայում կենսաինժեներիայի և կենսաինֆորմատիկայի ոլորտի մասնագետ դառնալու համար: